

4.2. Զբոսաշրջություն

4.2.1. Միջազգային զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2016թ. հունվար-դեկտեմբերին Հայաստանի Հանրապետություն է ժամանել<sup>1</sup> 1 259 657 զբոսաշրջիկ<sup>2</sup> կամ 2015թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 5.7%-ով:

2016թ. հունվար-դեկտեմբերին զբոսաշրջության նպատակով Հայաստանի Հանրապետությունից մեկնել է 1 262 687 մարդ կամ 2015թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 6.3%-ով:

Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ 2015-2016թթ. հունվար-դեկտեմբերին

	2015թ. հունվար- դեկտեմբեր	2016թ. հունվար- դեկտեմբեր	2016թ հունվար- դեկտեմբերը 2015թ. հունվար- դեկտեմբերի նկատմամբ
մարդ			
<b>Ժամանողներ</b>			
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ որոնցից տեղավորվել են՝	1 192 120	1 259 657	105.7
հյուրանոցային տնտեսության օբյեկտներում	164 732	174 724	106.1
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	1 027 388	1 084 933	105.6
<b>Մեկնողներ</b>			
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ որոնցից ուղևորությունը կազմակերպվել է	1 187 369	1 262 687	106.3
զբոսաշրջային գործակալությունների կողմից	6 569	7 348	111.9
ինքնուրույն	1 180 800	1 255 339	106.3

Ըստ հյուրանոցային տնտեսության օբյեկտներից ստացված հաշվետվությունների տվյալների, 2016թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ այցելած զբոսաշրջիկների 25.7%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 25.8%-ը՝ ԵՄ երկրներին և 48.5%-ը՝ այլ երկրներին:

<sup>1</sup>Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև 2013թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ ՄԶԳ Զեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:

<sup>2</sup>Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **միջազգային զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

**ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ու աճի տեմպը 2015-2016թթ. հունվար-դեկտեմբերին <sup>1</sup>**

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2015թ. հունվար-դեկտեմբեր	2016թ. հունվար-դեկտեմբեր	
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>106.1</b>
այդ թվում՝			
<b>ԱՊՀ երկրներ</b>	<b>26.7</b>	<b>25.7</b>	<b>101.9</b>
որից՝			
Ուկրաինա	3.1	2.3	79.8
Ռուսաստանի Դաշնություն	22.1	21.7	104.2
ԱՊՀ այլ երկրներ	1.5	1.7	112.3
<b>ԵՄ երկրներ</b>	<b>26.1</b>	<b>25.8</b>	<b>105.1</b>
որից՝			
Նիդերլանդներ	0.7	0.7	101.7
Իտալիա	2.8	3.1	115.1
Ֆրանսիա	6.2	5.3	90.7
Գերմանիա	5.2	6.3	130.1
Միացյալ Թագավորություն	3.2	3.1	100.8
ԵՄ այլ երկրներ	7.9	7.4	98.5
<b>Այլ երկրներ</b>	<b>47.2</b>	<b>48.5</b>	<b>109.0</b>
որից՝			
Միացյալ Նահանգներ	15.0	9.6	67.6
Իրանի Իսլամական Հանրապետություն	10.0	17.0	179.7
Վրաստան	2.6	3.3	133.3
Թուրքիա	1.1	0.5	51.4
Կանադա	1.6	2.1	140.8
Այլ երկրներ	16.9	16.1	100.8

**Զբոսաշրջության ցուցանիշների կառուցվածքն ու աճի տեմպն ըստ այցելության նպատակի**

մարդ

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2015թ. հունվար-դեկտեմբեր	2016թ. հունվար-դեկտեմբեր	
<b>Ժամանողներ<sup>1</sup></b>			
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>106.1</b>
որոնցից ըստ նպատակի			
գործնական	32.8	31.9	103.2
հանգստի և ժամանցի	45.1	49.8	117.0
կրթության	0.1	0.0	14.0
բուժման	0.4	0.3	70.3
այլ	21.6	18.1	88.7
<b>Մեկնողներ<sup>2</sup></b>			
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>111.9</b>
որոնցից ըստ նպատակի			
գործնական	15.2	4.9	35.8
հանգստի և ժամանցի	62.7	83.3	148.6
կրթության	0.0	0.0	2.0 անգ.
բուժման	0.7	0.0	2.0
այլ	21.4	11.8	61.9

<sup>1</sup> Բերված տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:

<sup>2</sup> Տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջային գործակալությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը: